# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**ԳԱՎԱՌ 2024**

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2024թ. մարտի 22-ին:

**Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝**

Հայրապետյան Ք.

Նախրատյան Մ.

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հարցման ընդհանուր նկարագիրը .....3
II. Հարցման մեթոդաբանությունը .....3
III. Ուսումնական գործընթացից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատում.....4
IV. Եզրակացություններ և առաջարկություններ .....15

## I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածությունը գնահատելու, վերլուծություն իրականացնելու, ուսման որակը բարելավելու նպատակով Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցման նպատակն է՝ բացահայտել առկա խնդիրները, ուսումնասիրել, վերլուծել, գնահատել ուսանողների կարծիքները, նկատառումները, առաջարկությունները, դժգոհությունները, դրանց հաշվառմամբ՝ ներկայացնել առաջարկություններ և ձեռնարկել միջոցներ՝ ուսումնական գործընթացի որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, հիմնական շահառուների բավարարվածության աճին նպաստելու համար:

## II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց, կիսաբաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է ԳՊՀ-ում կրթության որակի բարձրացմանը և ներքին շահակիցների բավարարվածության աճին:

## III. Գավառի պետական համալսարանում ուսուցման գործընթացից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատում

Գավառի պետական համալսարանում առկա և հեռակա բաժիններում սովորող 651 ուսանողներից հարցմանը մասնակցել են 383-ը, որը կազմում է գործող ուսանողների 59 %-ը:

### 1. Ընդհանուր տեղեկություններ

### Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների

| Ֆակուլտետը, բաժինը | Ուսանողների ընդհանուր թիվը | | Հարցմանը մասնակիցների թիվը | | Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը |
|---|---|---|---|---|---|
| | Առկա | Հեռակա | Առկա | Հեռակա | |
| | Բակալավր/մագիստրոս | Բակալավր | Բակալավր/մագիստրոս | Բակալավր | |
| **Բնագիտատնտեսագիտական** | **114/27** | **173** | **58/12** | **85** | 58,9% |
| Ֆինանսներ /ըստ ոլոտի/ | 38/9 | - | 19/6 | - | 53.1% |
| Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ | 10/6 | 99 | 12/3 | 52 | 58.2% |
| Տնտեսագիտություն | 24/5 | - | 17/3 | - | 68.9% |
| Կենսաբանություն | -/3 | 5 | -/- | - | 0% |
| Բնապահպանություն և բնօգտագործում | -/- | 3 | -/- | 1 | 33.3% |
| Սերվիս | 17/- | 14 | 5/- | 7 | 38.7% |
| Համակարգչային ճարտարագիտություն | 19/4 | 40 | 4/- | 22 | 41.2% |
| Դեղագործական քիմիա | 7/- | 3 | 1/- | - | 10% |
| Քարտեզագրություն և կադաստրային գործ | -/- | 9 | -/- | 3 | 33.3% |
| **Հումանիտար մասնագիտությունների** | **108/40** | **189** | **80/17** | **131** | **67,6%** |
| Իրավագիտություն | 29/18 | 107 | 23/4 | 72 | 64.2% |
| Պատմություն | 6/6 | 17 | 6/4 | 12 | 75.8% |
| Տարրական մանկավարժություն և մեթոդիկա | 20/10 | 55 | 20/6 | 41 | 78.8% |
| Հայոց լեզու և գրականություն | 22/4 | 4 | 17/3 | 2 | 73.3% |
| Ռուսաց լեզու և գրականություն | -/- | 6 | -/- | 4 | 66.6% |
| Անգլերեն լեզու և գրականություն | 31/2 | - | 19/- | - | 57.7% |
| **Ընդամենը** | **222/67** | **362** | **138/29** | **216** | **59%** |
| **Ընդամենը** | **651** | | **383** | | |

Հաջորդիվ ընդհանուր մասնակիցների թիվը՝ 383-ը, կընդունենք որպես 100%, և մասնակցությունն ըստ ֆակուլտետների և կրթական աստիճանների արդեն կունենա հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 1, 2):

**Գծապատկեր 1**

**Ուսանողների մասնակցությունն՝ ըստ ֆակուլտետների**




Գծապատկերից երևում է, որ հարցմանն առավել ակտիվ մասնակցել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողները:

**Գծապատկեր 2.**

**Ուսանողների մասնակցությունն՝ ըստ ուսուցման համակարգերի**



Ըստ ուսուցման համակարգերի՝ առավել ակտիվ հարցմանը մասնակցել են հեռակա ուսուցման բաժնի ուսանողները, ինչը կազմում է ընդհանուր թվի 57%-ը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ հեռակա ուսուցման բաժնում ուսանողների թվաքանակը ավելի շատ է և կազմում է Համալսարանում սովորող ուսանողների 55,6%-ը: Հետևաբար միանշանակ պնդել, թե որևէ բաժին պասիվ կամ ակտիվ մասնակցություն է ունեցել, ճիշտ չի լինի:

## 2. ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈ՞Ւ Է ԱՐԴՅՈՔ ԳՊՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1. Ուսուցանվող մասնագիտությունների մասին.

**Գծապատկեր 3.**




Հարցվողների 98,5%-ը հարցին պատասխանել է «այո», 0,5%-ը (2 ուսանող)՝ «ոչ»: «Ոչ» պատասխանները տրվել են Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի առկա բաժնի «Սերվիս» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտությունների 4-րդ կուրսի ուսանողների կողմից:

**2.2. Մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորությունների և պայմանների մասին.**

**Գծապատկեր 4.**




Հարցման մասնակիցների 96,6%-ը հարցին պատասխանել է «այո», 3,4%-ը (13 ուսանող)՝ «ոչ»:

Ինչպես վերը նշված հարցի դեպքում, այստեղ նույնպես «ոչ» պատասխանները տրվել են Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի առկա բաժնի «Համակարգչային ճարտարագիտություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտությունների 2-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների կողմից:

**2.3. Ուսումնական ռեսուրսների, ուսանողներին մատուցվող ուսումնաօժանդակ ծառայությունների մասին.**

**Գծապատկեր 5.**




Հարցվողների 92,7%-ը հարցին պատասխանել է «այո», 7,3%-ը (26 ուսանող)՝ «ոչ»: «Ոչ» պատասխաններն այս հարցի դեպքում ավելի շատ են գրանցվել: Հիմնականում տրվել են հետևյալ կուրսերի ուսանողների կողմից.

**Առկա ուսուցման բաժին.**

1. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտության 3-րդ կուրս,
2. «Հաշվապահական հաշվառում (ըստ ոլորտի)» մասնագիտության 3-րդ կուրս,
3. «Տնտեսագիտություն» մասնագիտության 3-րդ կուրս,

**Հեռակա ուսուցման բաժին**

4. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 4-րդ կուրս,
5. «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության 2-րդ և 3-րդ կուրսեր:

**2.4. Արդյունավետ ուսուցմանը նպաստող խորհրդատվական ծառայությունների մասին.**

**Գծապատկեր 6.**




Հարցվողների 95,1%-ը հարցին պատասխանել է «այո», 4,9%-ը (19 ուսանող)՝ «ոչ»: «Ոչ» պատասխաններ տրվել են հետևյալ կուրսերի ուսանողների կողմից.

**Առկա ուսուցման բաժին.**

1. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտության 3-րդ կուրս,
2. «Ֆինանսներ դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրս,
3. «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրս,
4. «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության 2-րդ կուրս,
5. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 3-րդ կուրս,

**Հեռակա ուսուցման բաժին.**

6. «Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ և 3-րդ կուրսեր:

**Հարցման մասնակիցները նաև հստակեցրել են իրենց պատասխանները.**

1. Խորհրդատվական ծառայությունները թույլ են:
2. ԳՊՀ կայքէջը պարբերաբար անհասանելի է:

3. Հեռակա բաժնի կուրսղեկները չեն տիրապետում համապատասխան խմբի մասնագիտությանը, հետևաբար նրանց մասնագիտական հարցով դիմել չենք կարող:

## 3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 3.1. Ուսումնառության տպագիր ռեսուրսներ

**Գծապատկեր 7.**

| Ռեսուրսներ | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ | 29% | 41% | 20% | 10% |
| Դասախոսություններ | 42% | 39% | 10% | 9% |
| Մասնագիտական գրականություն | 33% | 39% | 19,5% | 8,5% |
| Ուսումնական պլակատներ և քարտեզներ | 48,5% | 35,5% | 11% | 5% |
| Թերթեր, ամսագրեր, տեղեկատվական բրոշյուրներ | 44,5% | 32,5% | 18% | 5% |

### 3.2.Ուսումնառության էլեկտրոնային և համացանցային ռեսուրսներ

**Գծապատկեր 8.**

| Ռեսուրսներ | Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար |
|---|---|---|---|---|
| ԳՊՀ պաշտոնական կայքէջ | 44% | 31% | 20% | 10% |
| ԳՊՀ էլեկտրոնային https://library.gsu.am/ գրադարան | 12% | 25% | 40% | 23% |
| ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման http://learn.gsu.am/ համակարգ | 68% | 22% | 7% | 3% |
| ԳՊՀ էլեկտրոնային քննությունների անցկացման հարթակ՝ https://exam.gsu.am/ | 10% | 18% | 32% | 40% |
| Ազատ Wi-Fi գոտիներ | 74% | 26% | 0% | 0% |

### 3.3. Ուսումնական ենթակառուցվածքներ

***Գնահատման արդյունքներն ամփոփելիս հաշվի են առնվել ենթակառուցվածքի կիրառելիության առանձնահատկությունները՝ ըստ մասնագիտությունների պահանջարկի, որպեսզի բացառվեն ոչ նպատակային բացասական պատասխանների հաշվառումը:***

**Գծապատկեր 9.**

| **Ենթակառուցվածքներ** | **Գերազանց** | **Լավ** | **Բավարար** | **Անբավարար** |
|---|---|---|---|---|
| Համակարգչային լսարաններ | **41,5%** | **39%** | **12%** | **7,5%** |
| Բնագիտության լաբորատորիա | **43%** | **37%** | **14%** | **6%** |
| Վ.Ավետյանի անվան թանգարան | **73%** | **27%** | **0%** | **0%** |
| Կրիմինալիստիկայի լաբորատորիա | **37%** | **31%** | **24%** | **8%** |
| Երաժշտության լսարան | **69%** | **31%** | **0%** | **0%** |
| Գրադարան | **44,5%** | **41%** | **9,5%** | **5%** |
| Ընթերցասրահ | **39,5%** | **44%** | **12,5%** | **4%** |
| Նկարչության աշխատասենյակ | **67,5%** | **28,5%** | **4%** | **0%** |
| Մանկավարժահոգեբանական աշխատասենյակ | **81%** | **19%** | **0%** | **0%** |
| Լինգաֆոնային աշխատասենյակ | **23%** | **20%** | **25%** | **32%** |

**4. Օգտվո՞ւմ եք ԳՊՀ հանրակացարանից:**

**Գծապատկեր 9.**




Հարցվողների միայն 2%-ն է (7 ուսանող) հարցին պատասխանել «այո»:

Հանրակացարանից օգտվող ուսանողները նաև գնահատել են հանրակացարանում կեցության պայմանները (տե՛ս գծապատկեր 10):

**Գծապատկեր 10.**




Հանրակացարանից օգտվող ուսանողներից 4-ը նշել է «գերազանց» գնահատականը՝ գտնելով, որ հանրակացարանը հիանալի կահավորված է, մաքուր է: Առկա են ուսանողի հանգստի համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

2-ը նշել է «լավ» գնահատականը՝ գտնելով, որ հանրակացարանը կահավորված է, մաքուր է, սակայն կարիք ունի վերանորգման:

1-ը նշել է «բավարար» գնահատականը՝ գտնելով, որ հանրակացարանը թերի է կահավորված, ամենօրյա մաքրություն չի պահպանվում:

«Բավարար» գնահատականը տրվել է հեռակա բաժնի «Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողի կողմից:

Հարցվողների կողմից «անբավարար» գնահատական չի նշվել:

**5. Խնդրում ենք ներկայացնել Ձեր առաջարկությունները ԳՊՀ ուսումնական ռեսուրսները բարելավելու ուղղությամբ:**

*Հարցվողները ներկայացրել են հետևյալ առաջարկությունները.*

1. Մասնագիտական գրքերի ձեռքբերում:
2. Ավելացնել մասնագիտական գրականության ցանկը:
3. Համակարգիչների մեծ մասը չեն ծառայում իրենց նպատակին, հնացած են:
4. Համակարգչային լսարանների ավելացում:
5. Դասավանդման մեթոդների փոփոխությունն արդյունավետ է, առավելությունը տալ երիտասարդ դասախոսներին:
6. Լսարաններում համակարգիչների առկայությունը ցանկալի է:
7. Ցանկալի կլիներ յուրաքանչյուր լսարանում ունենալ լուսացրիչ:
8. Կարևորել ինտերակտիվ դասերը, որտեղ կարևորվում է վերլուծական մտածողությունը:
9. Նոր դաշնամուրի կարիք կա:
10. Մատյանները ինչո՞ւ թվայնացված չեն:
11. Գրադարանում բացակայում է դասախոսի կողմից հանձնարարված գրականությունը:
12. Լսարանի դռները չունեն կողպեքներ:
13. Պրակտիկաների տևողությունը երկարացնել:
14. Խնդրում ենք կազմակերպել ուսանողական Էքսկուրսիաներ:
15. 4-րդ հարկի լսարանները խնդրում ենք վերանորոգել:

16. Ջեռուցում կա, սակայն 4-րդ հարկի լսարանները կտուրին մոտ լինելու և պատուհաններից փչող քամու պատճառով գրեթե չեն տաքանում:
17. Գլխավոր մասնաշենքում դաշնամուրի կարիք կա:
18. Ոչ մասնագիտական դասընթացների անհատականները հանել:
19. Շատ են հանձնարարությունները, խնդրում ենք հաշվի առնել, որ մենք հեռակայում ենք սովորում:
20. Օտար անձանց մուտքը համալսարան սահմանափակել:
21. Սահմանափակել ԳՊՀ մուտքը ոչ համալսարանականների համար:
22. Համալսարանի անցակետը չի վերահսկվում:
23. Դասախոսները շատ են ծանրաբեռնում:
24. Ուսումնառության ընթացքում ավելացնել պրակտիկային հատկացված ժամաքանակը:
25. Ընթերցասրահը կարիք ունի վերանորոգման:
26. 4-րդ հարկում ցուրտ է, խնդրում ենք «Իրավագիտություն» բաժնի ուսանողներին տեղափոխել Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ:
27. Էլեկտրոնային գրադարանը համալրել ժամանակակից գրականությամբ:
28. Սանհանգույցներում օդափոխիչներ տեղադրել:
29. Առաջարկում եմ օտար լեզուներով գրված և հայերեն չթարկմանված ստեղծագործությունների թարգմանություն կազմակերպել:
30. «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացը տեղափոխել երրորդ կուրս:
31. Համալսարանի ներսում ստեղծել սննդի կետ:
32. Առաջարկում ենք էլեկտրոնային գրադարանի հարթակը թարմացնել:
33. Հեռակայում դժվար է մեկ օրում նույն դասախոսի մոտ մի քանի ժամ լսելը:
34. Կտրականապես բացառել թելադրվող դասախոսությունները:

## IV. Եզրակացություններ և առաջարկություններ.

Ամփոփելով հարցման արդյունքները, կարող ենք նշել, որ հարցմանն առավել ակտիվ մասնակվել են հեռակա բաժնում սովորող ուսանողները, առավել պասիվ՝ մագիստրոսները:

Հարցվողների մեծ մասը նշել է, որ իրականությանը համապատասխանում է Համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը աշխատաշուկայում մասնագիտության պահանջարկի, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորությունների, ուսումնական ռեսուրսների, ուսանողական օժանդակ ծառայությունների, խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ և՛ առկա, և՛ հեռակա բաժինների ավարտական կուրսերում սովորողները կարիք ունեն մասնագիտական գրականության:

Հարցվողների մեծամասնությունը գոհունակություն է հայտնել բուհի խորհրդատվական ծառայություններից՝ նշելով, որ Գավառի պետական համալսարանն աշխատում է ակադեմիական ազնվության սկզբունքով և բոլոր առումներով օրինակելի բուհ է, ռեկտորատը, դեկանատը և ամբիոնը տրամադրում են ցանկացած խորհրդատվություն և տեղեկատվություն:

Ուսանողների բավարարվածությունը ԳՊՀ ուսումնական գործընթացից ամբողջովին ուսումնասիրելու և վերլուծելու համար կարևոր են նաև որակական բաց հարցերը:

Հարցվողների մեծամասնությունը, ի թիվս ԳՊՀ-ի բազում առավելությունների, նշել են նաև թերություններ և առաջարկություններ, որոնց վերաբերյալ առաջարկում ենք համապատասխան ստորաբաժանումներին միջոցառումների պլան մշակել և զեկուցել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերում:

ԳՊՀ ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են համապատասխան ստորաբաժանումներ

(ֆակուլտետներ, ամբիոններ), որպեսզի ուսումնասիրվեն, ԳՊՀ ռեկտորատի կամ գիտական խորհրդի նիստերում ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման և հիմնական շահառուների՝ ուսանողների գոհունակության աստիճանի շարունակական բարձրացման նպատակով: